

## ***Ակումբ-երկրպագու հարաբերություններն ընդգրկվել են ՈԻԵՖԱ-ի արտոնագրման չափանիշի մեջ***

2012/13թթ-երի մրցաշրջանից սկսած և որպես ՈԻԵՖԱ-ի արտոնագրման պահանջ՝ բոլոր ակումբները պետք է ունենան երկրպագուների հարցերով գործող պատասխանատու (ԵՀՊ), ինչը նոր փուլի վրա կոնի ակումբ-երկրպագու հարաբերությունները:

2012/13թթ-երի մրցաշրջանից սկսած ՈԻԵՖԱ-ի արտոնագրման նոր պահանջի ներմուծումը, որի համաձայն բոլոր ակումբները պետք է ունենան երկրպագուների հարցերով գործող պատասխանատուներ (ԵՀՊ), իրավամբ նոր էջ է բացում ակումբ-երկրպագու հարաբերություններում և ընդգծում է այս հարաբերությունների կարևորությունը:

Համաձայն ՈԻԵՖԱ-ի ակումբների արտոնագրման և Ֆինասական արդար խաղի նոր կանոնակարգի 35-րդ հոդվածի՝ ակումբները պարտավոր են նշանակել երկրպագուների հարցերով պատասխանատու՝ ակումբի և վերջինիս երկրպագուների միջև համապատասխան և կառուցողական երկխոսություն հաստատելու համար: Այս փոփոխությունը եվրոպական ֆուտբոլի ղեկավարող մարմնի և “Supporters Direct” մարմնի սերտ համագործակցության արդյունքն է: “Supporters Direct”-ը այն մարմինն է, որն ուղղորդում և աջակցում է Եվրոպայի շուրջ 17 երկրների երկրպագուների խմբերին:

Երկրպագուների հարցերով պատասխանատուի (ԵՀՊ) սկզբունքը, որն ուսումնասիրման մեջ է եղել որոշ ժամանակ, ամբողջովին հաստատվել է ՈԻԵՖԱ-ի ակումբների արտոնագրման կոմիտեում ներկայացված ազգային ասոցիացիաների կողմից և կազմվել է “Supporters Direct”-ի հետ սերտ համագործակցության շնորհիվ:

### **Ո՞վ է երկրպագուների հարցերով պատասխանատուն**

Երկրպագուների հարցերով պատասխանատուները արդեն գործում են սահմանափակ թվով եվրոպական երկրների ակումբներում և գլխավորապես աջակցում են երկրպագուների և վերջիններիս երկրպագած ակումբների միջև երկխոսության բարելավմանը: Ամենակարևորը երկրպագուների հարցերով պատասխանատուները պետք է վստահեն երկրպագուներին և, հետևաբար, պետք է փորձ ու կապեր ունենան ակումբների երկրպագուների շրջանակներում:

Երկրպագուների հարցերով պատասխանատուները (ԵՀՊ) կամուրջ են հանդիսանում երկրպագուների և ակումբի միջև ու աջակցում են երկու կողմերի միջև երկխոսության բարելավմանը: Նրանց աշխատանքը հիմնված է երկու կողմից ստացվող տեղեկատվության և փոխվստահության վրա:

Երկրպագուների հարցերով պատասխանատուները երկրպագուներին տեղեկացնում են ակումբի ղեկավար մարմինների կողմից կայացրած համապատասխան որոշումների մասին, մյուս կողմից էլ՝ ղեկավար մարմիններին են փոխանցում երկրպագուների պահանջներն ու կարիքները: Նրանք կապեր են հաստատում ոչ միայն բազմազան երկրպագուների խմբերի և նախաձեռնությամբ հանդես եկող անձանց հետ, այլև ոստիկանության և անվտանգության ուժերի հետ: Նրանք խաղից առաջ կապեր են հաստատում նաև այլ ակումբների երկրպագուների հարցերով պատասխանատուների հետ՝ հավաստիանալու համար, որ երկրպագուներն իրենց դրսևորում են անվտանգության ուղեցույցերի համաձայն:

## **Ի՞նչ է սպասվում հաջորդիվ**

Նոր պահանջներն իրականացնելու նպատակով Եվրոպայի յուրաքանչյուր ազգային ասոցիացիայում կստեղծվի երկրպագուների հարցերով պատասխանատուների կոնտակտային տվյալների համացանց, որը կաշխատի ՈԻԵՖԱ-ի ակումբների արտոնագրման թիմի և “Supporters Direct”-ի հետ համատեղ՝ ՈԻԵՖԱ-ի 53 անդամ ասոցիացիաներում ակումբների և երկրպագուների խմբերի միջև հաղորդակցությունը բարելավելու նպատակով: Այս տարի ավելի քան 600 ակումբ դիմել է ՈԻԵՖԱ-ի արտոնագիր ստանալու համար, որոնցից շատերը նույն կամ նմանատիպ սկզբունքներով դիմել են ներքին արտոնագիր ստանալու նպատակով՝ դրանով իսկ մեծացնելով երկրպագուների հարցերով պատասխանատուների (ԵՀՊ) ծրագրի շրջանակներն ու կարևորությունը:

Արտոնագրման համակարգի նման՝ երկրպագուների հարցերով պատասխանատուների ինստիտուտի գործադրումն ու զարգացումը գործիք կհանդիսանա նվազագույն ստանդարտների բարձրացման համար, որը ենթադրում է ժամանակին համահունչ փոխվող դինամիկ համակարգի ստեղծում և երկրպագուների ու ակումբների միջև երկխոսության բարելավում: